ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 0503
18 FEB 2021
Կից ☐ Նշում

«17» փետրվար 2021թ. No 473 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 4702-Ա, ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 4084-Ա ԵՎ ԴԵԿԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 4370-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի դեկտեմբեր 30-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 4702-Ա հրամանի հավելվածի «Ակտովեգին ներարկման լուծույթ 2մլ, 5մլ և 10մլ դեղերի «Արտադրող» և «Գրանցման հավաստագրի իրավատեր» կետերի «Տակեդա Ֆարմասեուտիկալս» և «Տակեդա Ֆարմասյուտիկալս» բառերը փոխարինել «"Տակեդա Ֆարմասյուտիկալս"» բառերով, իսկ Ակտովեգին ներարկման լուծույթ 5մլ դեղի «Թողարկման ձև (փաթեթավորում)» կետի «25(5x5)-ական ամպուլներ 5մլ, բլիստերում» բառերը փոխարինել «5(1x5)-ական ամպուլներ 5մլ, բլիստերում» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 4084-Ա հրամանի հավելվածի Նալգեզին դեղի «Արտադրող» կետի «ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո, Սլովենիա» բառերը փոխարինել «ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո-բալք արտադրող, փաթեթավորող, որակի (մանէաբանական) և բաց թողնման հսկող, ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Պովիովա փ. 5, 8501 Նովո Մեստո, Սլովենիա-որակի հսկող (ֆիզիկոքիմիական)» բառերով:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի դեկեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 4370-Ա հրամանի հավելվածի Գոնադոտրոպին խորիոնային դեղափոշի

Լուսաբ. 18.02.21 ժ.10[15]

լիոֆիլացված մ/մ ներարկման լուծույթի 500ՄՄ և 1000ՄՄ դեղերի «Թողարկման ձև (փաթեթավորում)» կետերի «5-ական ապակե սրվակ և 5-ական լուծիչ ամպուլում 1մլ» բառերը փոխարինել «5-ական ապակե սրվակներ և 5-ական լուծիչ ամպուլներում 1մլ» բառերով:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

17.02.2021

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157